Ալեքսանդր Ծատուրյան

Դաշտում

Ամռան տոթ օր է: Օդն անշա՛րժ, խեղդո՛ւկ,
Վերից արևն է անողորմ կիզում.
Եռում է հունձը: Գեղջկուհի, գեղջուկ
Ոսկի՛ արտերում խուրձեր են դիզում:

Դիզում են անխոնջ, զվարթ, հուսալից.
Խընդում, քըրքըջում, կատակներ անում.
Կըտակի նըման, այրված դեմքերից
Քըրտինքն է վազում ու շոգիանում:

Եվ խո՛րթ է նըրանց թուլամորթ տրտունջ.
Արյունն է եռում բանուկ ձեռքերում.
Արդար վաստակի սերն է սրբաշունչ
Նըրանց ուժ տալիս ու ոգևորում:

Երկի՛նք գըթառատ, որ լույս-հայացքով
Նայում ես չարքաշ մըշակի կյանքին
Այդ կյանքը լի է հազա՛ր զըրկանքով...
Մի՛ թող դու նըրան կարոտ քո խնամքին: